Co-funded by the European Union

KONRAD ADENAUER STIFTUNG

YIC YOUTH INITIATIVE CENTRE

World Vision ARMENIA

MEDIA INITIATIVES CENTER

YOUth in Action

«ՔՈ ՁԱՅՆԸ, ՔՈ ՀԱՄԱՅՆՔԸ, ՔՈ ՄՈԼՈՐԱԿԸ»

քաղաքացիական և էկոլոգիական քարտեզագրում Արագածոտնի մարզում

ՕՇԱԿԱՆ-2026

«Քո ձայնը, քո համայնքը, քո մոլորակը» քաղաքացիական և էկոլոգիական քարտեզագրում Արագածոտնի մարզում զեկույցը իրականացվել է “CreARTive School for Rural Youth Eco-Leadership” ծրագրի շրջանակներում:

“CreARTive School for Rural Youth Eco-Leadership” ծրագիրը հնարավոր է դարձել Youth in Action: Youth Empowerment and Leadership Development in Armenia ծրագրի շրջանակներում տրված ենթադրամաշնորհի շնորհիվ:

«Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման եւ առաջնորդության խթանման» ծրագիրը Եվրոպական միության եւ Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կողմից ֆինանսավորվող նախաձեռնություն է, որն իրականացվում է Վորլդ Վիժն Հայաստանի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»–ի հետ համատեղ:

«Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Միավորող կամուրջ» սոցիալական հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները»:

“This publication was produced with the financial support of the European Union. Its contents are the sole responsibility of “Uniting Bridge” social NGO and do not necessarily reflect the views of the European Union.”

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ 7
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ 8
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԿ-ՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 16
ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ 19
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 21

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԲԿԳ – Բաց կառավարման գործընկերություն

ՀԿ – հասարակական կազմակերպություն

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՔՀԿ – քաղաքացիական հասարակության կազմակերպություն

CB – Caucasus Barometer (Կովկասյան բարոմետր)

CSO Meter – Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության միջավայրի գնահատման գործիք

COVID-19 – կորոնավիրուսային հիվանդություն (2019)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտությունը համադրում է Հայաստանում երիտասարդական և քաղաքացիական մասնակցության թեմայով հրապարակված ուսումնասիրությունները և մշակված քաղաքականությունները՝ “CreARTive School for Rural Youth Eco-Leadership” ծրագրի շրջանակում Արագածոտնի մարզում քաղաքացիական և էկոլոգիական մասնակցության և երիտասարդների ներգրավման քարտեզագրության համար կիրառելի ռազմավարություն և մեթոդաբանություն մշակելու նպատակով:

Վերջին տարիներին արված հետազոտությունները ցույց են տալիս, որ անգամ վերջին տարիների բարեփոխումների արդյունքում մասնակցության համար իրավական/քաղաքական նախադրյալների ստեղծման պայմաններում տեղական մակարդակում քաղաքացիական մասնակցությունը շարունակում է մնալ ցածր, և կարևոր է անցում կատարել «մեխանիզմների գոյության» նկարագրությունից դեպի դրանց կիրառման որակի գնահատում (իրազեկում, հասանելիություն, վստահություն, հետադարձ կապ):

Միևնույն ժամանակ, բաց կառավարման օրակարգում արձանագրվել է գործնական առաջընթաց՝ մասնակցային բյուջետավորման գործիքի ընդլայնմամբ, որը կարող է ծառայել որպես սկզբնակետ քաղաքացիական ներգրավման համար Հայաստանի մարզերում և հատկապես գյուղական բնակավայրերում:

Հայաստանում քաղաքացիական հասարակական կազմակերպությունների գործունեության ոլորտները և հնարավորությունները բավական լայն են. երկրում գրանցված են ավելի քան 6,000 հասարակական կազմակերպություններ, որոնց, հատկապես փոքր ՔՀԿ-ների 80%-ը հիմնականում կախված է միջազգային դոնորների կողմից տրամադրվող դրամաշնորհներից:

Կեղծ տեղեկությունները ՀԿ-ների և նրանց գործունեության մասին, ինչպես նաև բացասական քարոզչությունը և առհասարակ բացասական տրամադրությունները միջազգային ֆինանսավորմամբ գործունեություն ծավալող

կազմակերպությունների նկատմամբ պատճառ են դարձել, որ մի շատ մարդիկ ՔՀԿ-ները կապում են հակազգային գործունեության և կործանարար հետևանքների հետ[1]: Մասամբ նաև սրանով պայմանավորված, ըստ Կովկասյան բարոմետրի 2021 թվականի հետազոտության, հայաստանյան ՔՀԿ-ները չունեն վստահության բարձր մակարդակ: Ըստ այդ ուսումնասիրության՝ երկրի բնաչության 37%-ը չի վստահում տեղական ՔՀԿ-ներին, և ընդամենը 25%-ը նշել է, որ վստահում է[2]:

«Բաց կառավարման գործընկերության» (ԲԿԳ) 2022–2024 արդյունքների զեկույցը նշում է, որ մասնակցային բյուջետավորման մեխանիզմը հասանելի է դարձել 21 համայնքում (71-ից)՝ քաղաքացուն տալով նախագծային առաջարկ ներկայացնելու և քվեարկելու հնարավորություն: 2024 թվականին նշված ծրագրին մասնակցել է 4 համայնք՝ Արագածոտնի մարզի Աշտարակ, Արմավիրի մարզի Արմավիր, Կոտայքի մարզի Աբովյան և Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքները: ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման համար ընդհանուր գումարով 1.0 մլրդ դրամի չափով նախատեսված է համայնքներին սուբվենցիաների տրամադրում՝ թվով 21 համայնքների համար: Արագածոտնի մարզից ընտրվել են Աշտարակ, Թալին, Ապարան, Ծաղկահովիտ համայնքները, ինչը պայմանավորված է 2024թ. կամավոր, առանց պետական բյուջեից սուբվենցիաների հատկացման իրականացված մասնակցային բյուջետավորման գործընթացներով և համայնքների բավարար փորձառությամբ[3]: Եվրոպայի խորհրդի տեղական բաց կառավարման ձեռնարկը շեշտում է, որ մասնակցությունն ու թափանցիկությունը պետք է ուղեկցվեն էթիկայի/հաշվետվողականության մեխանիզմներով՝ վստահություն կառուցելու և ավելի որակյալ որոշումներ ապահովելու համար:

[1] https://armenia.peopleinneed.net/media/publications/2396/file/update-assessment -civic-space-inarmenia.pdf
[2] https://caucasusbarometer.org/en/cb2021am/TRUNGOS/
[3] https://minfin.am/hy/page/hy_participatory_2025

Արագածոտնի մարզի երիտասարդների մասնակցության վերջին տոկոսները (և հատկապես՝ քաղաք/գյուղ բաժանումով) հանրային բաց աղբյուրներում «պատրաստ» տեսքով չեն հանդիպում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Սույն հետազոտության նպատակն է՝ ձևավորել տվյալահեն և գործառնական հիմք Արագածոտնի մարզում երիտասարդների քաղաքացիական և էկոլոգիական մասնակցության և ներգրավման գործընթացների քարտեզագրման համար՝ համադրելով ազգային քաղաքականությունների և մեխանիզմների վերլուծությունը մարզային իրական փորձի և դաշտային տվյալների հետ:

Հետազոտությունը միտված է բացահայտելու, թե ինչպես են ազգային մակարդակում սահմանված քաղաքացիական և էկոլոգիական մասնակցության գործիքներն ու մոտեցումները կիրառվում տեղական մակարդակում, ինչպիսի խոչընդոտների և հնարավորությունների են բախվում երիտասարդները համայնքային գործընթացներին մասնակցելիս, և ինչ դեր կարող են ունենալ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները երիտասարդների ներգրավման խթանման գործում: Այս մոտեցումը կառուցված է այն տրամաբանությամբ, որ մարզային ծրագրերի իրականացումը պետք է հենվի միաժամանակ՝ (ա) ազգային քաղաքականությունների/մեխանիզմների վրա և (բ) մարզում դրանց կիրառման կոնկրետ դրսևորումների վրա:

Ստացված արդյունքները նախատեսված են ծառայելու որպես բազային հիմք “CreARTive School for Rural Youth Eco-Leadership” ծրագրի շրջանակում ինտերակտիվ քաղաքացիական և էկոլոգիականլոգիական քարտեզի մշակման, ինչպես նաև ապագա միջամտությունների և ծրագրերի պլանավորման համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության շրջանակում սահմանվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- Վերլուծել Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական և էկոլոգիական մասնակցության և երիտասարդների ներգրավման վերաբերյալ առկա քաղաքականությունները, ռազմավարությունները և միջազգային ու ազգային ուսումնասիրությունները՝ առանձնացնելով մարզային մակարդակի համար կիրառելի եզրահանգումները:
- Քարտեզագրել Արագածոտնի մարզում քաղաքացիական և էկոլոգիական մասնակցության առկա մեխանիզմները և գործիքները՝ գնահատելով դրանց կիրառման որակը, հասանելիությունը և ընկալվող ազդեցությունը երիտասարդների համար:
- Ուսումնասիրել Արագածոտնի մարզի երիտասարդների քաղաքացիական և էկոլոգիական մասնակցության մակարդակը, ձևաչափերը և հաճախականությունը՝ բացահայտելով մասնակցության շարունակականության և որակի հիմնական միտումները:
- Բացահայտել երիտասարդների քաղաքացիական և էկոլոգիական մասնակցությանը խոչընդոտող և խթանող գործոնները՝ տեղեկատվական, կազմակերպչական, ինստիտուցիոնալ և մոտիվացիոն համատեքստում:
- Վերլուծել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դաշտը Արագածոտնի մարզում և գնահատել դրանց ընկալվող դերը երիտասարդների ներգրավման գործընթացներում:
- Ձևավորել տվյալների կիրառելի կառուցվածք և մոտեցում ինտերակտիվ քարտեզի համար՝ ապահովելով հավաքագրված տվյալների վիզուալ և վերլուծական օգտագործման հնարավորությունը:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ

Ըստ «Մարդիկ կարիքի մեջ» (People in Need) միջազգային կազմակերպության 2024թ. գնահատականի, 2023-ին Հայաստանում գրանցված է եղել 6,331 հասարակական կազմակերպություն՝ պետական ռեգիստրի տվյալներով, ինչը ցույց է տալիս ոլորտի թվային մեծ ծավալը, սակայն ինքնին չի երաշխավորում մարզային արդյունավետ ներկայություն կամ ազդեցություն: Նույն աղբյուրը ցույց է տալիս ՔՀԿ-ների կայունության խոցելիությունը՝ նշելով, որ

հարցված ՔՀԿ-ների ֆինանսավորման հիմնական աղբյուրը միջազգային դոնորների դրամաշնորհներն են (80%), իսկ տեղական ֆինանսական աղբյուրները համեմատաբար սահմանափակ են: Նույն գնահատականը նաև մատնանշում է հանրային վստահության խնդիրը ՀԿ-ների նկատմամբ (CB 2021՝ 37% չի վստահում, 25% վստահում է), ինչը նշանակում է՝ ներգրավման ռազմավարությունում անհրաժեշտ է վստահության կառուցման չափելի քայլեր (թափանցիկ հաղորդակցություն, համայնքային հետադարձ կապ, «արագ հաղթանակներ»)[4]:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ

«Բաց կառավարման գործընկերության» (ԲԿԳ) շրջանակում մասնակցային բյուջետավորումը ներկայացվում է որպես քաղաքացիական մասնակցության կարևոր գործիք տեղական մակարդակում, որը թույլ է տալիս բնակիչներին ներկայացնել նախագծային առաջարկներ և քվեարկել դրանց շուրջ: ԲԿԳ-ի 2022–2024 արդյունքների զեկույցում նշվում է, որ 21 համայնք (71-ից) արդեն ունի հանրային ներգրավման հնարավորություն մասնակցային բյուջետավորման միջոցով, և ֆինանսավորումը նախատեսված է համայնքային և պետական բյուջեներից: Մյուս կողմից, նույն ԲԿԳ-ի պարտավորության նկարագրությունը բաց տեքստով շեշտում է, որ տեղական մակարդակում մասնակցության մակարդակը շարունակում է մնալ ցածր՝ նույնիսկ իրավական նախադրյալների առկայության պայմաններում:

2025 թվականին Աշտարակ համայնքում մասնակցային բյուջետավորման ծրագրով էկոլոգիական խնդիրների լուծման ուղղությամբ բնակիչների կողմից հայտ ներկայացրած և եզրափակիչ փուլ անցած նախաձեռնությունները երեքն են, որոնք ներառում են՝ Բազմաղբյուր և Ղազարավան բնակավայրերում աղբամանների տեղադրում, Ուշի բնակավայրը «մաքուր գյուղ» դարձնելու նախագիծ, Աշտարակ քաղաքի որոշ փողոցների ոռոգման համակարգերի հիմնանորոգում: Ներկայացված առաջարկները, սակայն, անհրաժեշտ թվով

[4] https://armenia.peopleinneed.net/media/publications/2396/file/update-assessment -civic-space-in-armenia.pdf

ձայներ չեն հավաքել և նախատեսվել է դրանք իրականացնել համայնքապետարանի այլ ծրագրերի շրջանակներում [5] :

Ապարան համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման եզրափակիչ փուլ անցած 11 նախագծերից էկոլոգիական ուղղվածություն ունի միայն մեկը՝ Նիգավան բնակավայրում աղբամանների տեղադրում[6], որը, սակայն, չի ճանաչվել հաղթող նախագիծ:

Թալին համայնքում ևս, 2025 թվականի մասնակցային բյուջետավորման շրջանակներում էկոլոգիական նախագծեր հաղթող չեն ճանաչվել[7] :

Ծաղկահովիտ համայնքում բնակիչների կողմից ներկայացված 23 հայտերից երկուսը ներառում են ջրամբարի պատվարի, ջրագծի կառուցման առաջարկներ, սակայն քվերակության արդյունքում այս համայնքում ևս էկոլոգիական նախագիծ հաղթող չի ճանաչվել [8]:

Եվրոպայի խորհրդի տեղական բաց կառավարման և հանրային էթիկայի ձեռնարկը տեղական իշխանություններին առաջարկում է գործիքների շրջանակ՝ հանրային խորհրդակցություններ, մասնակցային բյուջետավորում, ստորագրահավաքներ և տեղական հանրաքվեներ, ինչպես նաև շեշտում է էթիկայի/հաշվետվողականության կարևորությունը՝ վստահության կառուցման համար: Սա կարևոր է Արագածոտնի քարտեզագրման համար, քանի որ մարզային համատեքստում «մասնակցության կառուցակարգերը» հաճախ ավելի արդյունավետ են լինում, երբ հստակ է՝ որտեղ, ինչպես, երբ և ինչ է ստանում քաղաքացին (և հատկապես՝ երիտասարդը) իր մասնակցությունից:

Ըստ Հայաստանի վերաբերյալ Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջավայրի գնահատման գործիքի (CSO Meter- 2021–2023)՝ թվայնացումը կարևոր դեր է խաղացել քաղաքացիական հասարակության գործունեության զարգացման մեջ: COVID-19 համավարակը արագացրել է թվային գործիքների կիրառումը՝ հնարավորություն տալով ՔՀԿ-ներին հասնել ավելի լայն

[5] https://ashtarak.am/upload/DocFlow/UpLoader/Th2532017494011797_Ashtarak38.pdf

[6] https://aparan.am/upload/DocFlow/as_process/Tu25111816422761968_IMG_00013.pdf
[7] https://talin.am/Pages/Home/newsdetails.aspx?nID=1311
[8] https://tsaghkahovithamaynq.am/upload/DocFlow/as_process/Fr253141636349418_4.pdf

լսարանների: Առցանց հարթակները դարձել են առանցքային միջոցառումների կազմակերպման, տեղեկատվության տարածման և աջակցության մոբիլիզացիայի համար նոր գործիքներ[9]:

“CreARTive School for Rural Youth Eco-Leadership” ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՐՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կարևորելով “CreARTive School for Rural Youth Eco-Leadership” ծրագրի շրջանակում իրականացվող վերլուծության շրջանակներում քաղաքացիների դիրքորոշման ներկայացումը, մշակվել և իրականացվել է հարցում Արագածոտնի մարզում, որը նպատակ ուներ հավաքագրել քանակական և որակական տվյալներ երիտասարդների քաղաքացիական ակտիվության, համայնքային գործընթացներին մասնակցության փորձի, իրազեկվածության մակարդակի, ինչպես նաև մասնակցությանը խոչընդոտող և խթանող գործոնների վերաբերյալ:

Հարցմանը մասնակցել են Արագածոտնի մարզի չորս խոշորացված համայնքների՝ **Աշտարակի, Ապարանի, Ծաղկահովիտի և Թալինի ներկայացուցիչները**: Հարցումն իրականացվել է ինքնալրացման ձևաչափով: Հարցաթերթիկը ներառում է փակ և բաց հարցեր: Սա հնարավորություն է տվել ստանալ ինչպես քանակական, այնպես էլ որակական տվյալներ:

Տվյալները մշակվել են ամփոփ վերլուծության միջոցով՝ հաշվարկելով պատասխանների տոկոսային բաշխումները և վերլուծելով բաց հարցերի հիմնական միտումները:

Մասնակիցների տարածքային բաշխումը համայնքների միջև համեմատաբար հավասարակշռված է, ինչը հնարավորություն է տալիս դիտարկել քաղաքացիական մասնակցության միտումները համադրելի ցուցանիշներով:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդների 60%-ը վերջին 12 ամիսների ընթացքում մասնակցել է համայնքային որևէ գործընթացի՝ ներառյալ հանրային հանդիպումներ, կամավորական նախաձեռնություններ,

[9] https://csometer.info/sites/default/files/202310/2022%20Armenia%20CSO%20Meter%20Country%20Report%20ENG_0.pdf

հասարակական ակցիաներ կամ քննարկումներ: Սա վկայում է, որ Արագածոտնի մարզում առկա է քաղաքացիական մասնակցության որոշակի մշակույթ և փորձ:

Միևնույն ժամանակ, մասնակիցների 40%-ը, այնուամենայնիվ, վերջին մեկ տարվա ընթացքում համայնքային որևէ գործընթացի չի մասնակցել: Այս փաստը ցույց է տալիս, որ երիտասարդների քաղաքացիական ներուժը դեռևս ամբողջությամբ չի իրացվում, և պահանջվում են նպատակային միջամտություններ՝ մասնակցությունն ընդլայնելու և նոր խմբեր ներգրավելու համար: Մասնակցություն ունեցող երիտասարդների պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքային գործընթացներին մասնակցած հարցվածների **մոտ 60%-ի շրջանակում գերակշիռ մասը (մոտ 70–75%)** մասնակցում է **ոչ կանոնավոր կերպով**, հիմնականում տարեկան 1–2 անգամ կամ առանձին նախաձեռնությունների և միջոցառումների շրջանակում: Միևնույն ժամանակ, հարցվածների **ընդամենը մոտ 15–20%-ն է** նշել, որ մասնակցում է համայնքային գործընթացներին **ամսական կամ պարբերաբար**: Այս տվյալները վկայում են, որ պարբերական և համակարգված ներգրավվածությունը երիտասարդների շրջանում սահմանափակ է, և համայնքներում դեռևս բավարար չափով ձևավորված չեն երիտասարդների շարունակական մասնակցության կայուն մեխանիզմներ:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ Արագածոտնի մարզի երիտասարդների գերակշիռ մասը հստակ պատկերացում ունի համայնքներում առկա էկոլոգիական խնդիրների մասին: Որպես առաջնային խնդիրներ նրանց մեծ մասը նշել է **թափոնների ոչ արդյունավետ կառավարումը**, **կանաչ տարածքների պակասը**, ինչպես նաև **ջրային ռեսուրսների պահպանության խնդիրները**: Հարցման տվյալների համաձայն՝ երիտասարդների միայն **35%** նշել է, որ երբևէ մասնակցել է բնապահպանական որևէ նախաձեռնության՝ համայնքային մաքրում, ծառատունկ, կամավորական ակցիա և այլն: Միևնույն ժամանակ, **մոտ 45%-ը** նշել է, որ չի մասնակցել, սակայն հետաքրքրված է նման նախաձեռնություններով, իսկ **մոտ 20%-ը** նշել է, որ չի մասնակցել և ներկայումս առանձնապես հետաքրքրված չէ: Այս տվյալները ցույց են տալիս, որ համայնքներում առկա է **էկո**

մասնակցության զգալի հնարավորություն, որը դեռևս ամբողջությամբ չի իրացվում:



Մասնակցության հիմնական ձևաչափերն են՝ կամավորական աշխատանքը, համայնքային աշխատաժողովները և քաղաքացիական նախաձեռնություններին մասնակցությունը: Առցանց մասնակցության ձևերը և թվային գործիքների կիրառումը դեռևս սահմանափակ են, սակայն դիտարկվում են որպես հետաքրքիր և հեռանկարային ուղղություն երիտասարդների համար:

Հարցման տվյալները ցույց են տալիս, որ երիտասարդների մի մասը լիարժեք կամ մասնակիորեն տեղյակ է իր քաղաքացիական և էկոլոգիական իրավունքներից և մասնակցության հնարավոր մեխանիզմներից, սակայն զգալի հատվածը նշել է, որ իրազեկվածությունը սահմանափակ է կամ անբավարար:

Սա վկայում է կրթական և տեղեկատվական բացերի առկայության մասին, հատկապես տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության, մասնակցային մեխանիզմների և երիտասարդների ներգրավման հնարավորությունների վերաբերյալ:

Հարցման արդյունքները բացահայտում են մի քանի համակարգային խոչընդոտներ, որոնք սահմանափակում են երիտասարդների էկոլոգիական ակտիվությունը:

- տեղեկատվության պակասը համայնքային նախաձեռնությունների և գործընթացների վերաբերյալ,
- ժամանակի սահմանափակ լինելը,
- վստահության պակասը համայնքային գործընթացների ազդեցության նկատմամբ,
- երիտասարդների կարծիքի չլսված լինելու ընկալումը:

Այս գործոնները ցույց են տալիս, որ խնդիրը հիմնականում կառուցվածքային և կազմակերպչական է, այլ ոչ թե երիտասարդների պասիվության հետևանք:

Հարցման արդյունքների համաձայն՝ երիտասարդների մասնակցությունը կարող է խթանվել հետևյալ գործոնների միջոցով.

- նպատակային վերապատրաստումների և կարողությունների զարգացման ծրագրերի իրականացում,
- երիտասարդների ձայնի իրական ազդեցության ապահովում համայնքային որոշումների կայացման գործընթացում,
- թվային գործիքների և նորարարական մասնակցային մեթոդների կիրառում,
- խրախուսման ոչ նյութական ձևերի (ճանաչում, հավաստագրեր, տեսանելիություն) ներդրում:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ Արագածոտնի մարզի երիտասարդները պատրաստ են և հետաքրքրված են համայնքային կյանքին մասնակցելու հարցում, սակայն առկա են տեղեկատվական, կազմակերպչական և ինստիտուցիոնալ խոչընդոտներ, որոնք սահմանափակում են այդ մասնակցության խորությունը և շարունակականությունը:

Ստացված տվյալները կարող են ծառայել որպես **բազային տեղեկատվություն** երիտասարդների քաղաքացիական մասնակցության քարտեզագրման համար՝ թույլ տալով.

- բացահայտել ակտիվության մակարդակները համայնքային կտրվածքով,
- տեսանելի դարձնել մասնակցության խոչընդոտներն ու խթանները,

- ձևավորել ապագա միջամտությունների և ծրագրերի համար տվյալահեն հիմք:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդների միայն սահմանափակ հատվածն է լիարժեք իրազեկ իր քաղաքացիական իրավունքների և մասնակցության մեխանիզմների մասին: Մասնակիցների զգալի մասը (մոտ կեսը) նշել է, որ ունի միայն մասնակի կամ շատ սահմանափակ պատկերացում այդ հնարավորությունների մասին:

Այս ցուցանիշը վկայում է **ուղիղ կապի բացակայության** մասին իրազեկվածության և մասնակցության միջև. նույնիսկ այն երիտասարդները, որոնք որոշ դեպքերում մասնակցել են համայնքային գործընթացների, հաճախ դա արել են առանց հստակ հասկանալու իրենց իրավունքների շրջանակը կամ ազդեցության իրական հնարավորությունները:

Մասնակիցների **մոտ մեկ երրորդը** կարծում է, որ երիտասարդների մասնակցությունը քիչ ազդեցություն ունի իրական որոշումների վրա, իսկ որոշ դեպքերում այն ընկալվում է որպես ձևական գործընթաց: Սա վկայում է ոչ միայն մասնակցության ցածր որակի, այլ նաև **ինստիտուցիոնալ վստահության խնդրի** մասին:

Այս վերաբերմունքը հատկապես վտանգավոր է երկարաժամկետ տեսանկյունից, քանի որ այն կարող է ձևավորել մասնակցությունից հրաժարվելու կայուն վարքագիծ:

Մասնակիցների ավելի քան **կեսը նշել է**, որ համայնքային նախաձեռնությունների մասին տեղեկատվությունը կամ ուշ է հասնում, կամ ընդհանրապես հասանելի չէ: Տեղեկատվության պակասը դիտարկվում է որպես մասնակցությանը խոչընդոտող ամենատարածված գործոններից մեկը:

Բացի այդ, հարցվածների զգալի մասը նշել է **ժամանակի պակասը** որպես հիմնական խոչընդոտ: Սակայն որակական դիտարկումը ցույց է տալիս, որ ժամանակի պակասը հաճախ երկրորդային պատճառ է և պայմանավորված է մասնակցության արժեքի ցածր ընկալմամբ. եթե երիտասարդը չի հավատում իր

մասնակցության ազդեցությանը, ապա ժամանակ ներդնելը դառնում է ոչ առաջնահերթ:

Հարցման արդյունքները ցույց են տալիս հետաքրքիր բևեռացում մոտիվացիոն դաշտում:

- Մասնակիցների շուրջ **60–65%-ը** կարծում է, որ մասնակցությունը կաճի, եթե ապահովվի երիտասարդների ձայնի իրական ազդեցությունը:
- Միևնույն ժամանակ, մոտ **25–30%-ը** կարևորում է խթանման ավելի գործնական մեխանիզմներ՝ վերապատրաստումներ, ճանաչում, հավաստագրեր կամ հստակ արդյունք տեսնելու հնարավորություն:

Սա վկայում է, որ երիտասարդները միատարր խումբ չեն. մի մասն առաջնորդվում է արժեքներով և ազդեցության գաղափարով, մյուս մասը՝ կոնկրետ օգուտով և հստակ արդյունքով:

Հարցման տվյալները բացահայտում են նաև մի կարևոր խումբ՝ երիտասարդներ, որոնք չեն մասնակցում համայնքային գործընթացներին, այդ թվում՝ էկո, բայց միաժամանակ **չեն արտահայտում բացասական վերաբերմունք քաղաքացիական մասնակցության նկատմամբ**:

Այս խումբը հիմնականում նշում է տեղեկատվության պակասը և անհասկանալի մասնակցային ձևաչափերը որպես պատճառ, ինչը ցույց է տալիս, որ նրանք կարող են դառնալ ակտիվ մասնակիցներ համապատասխան միջամտությունների դեպքում:

Ստացված տվյալները թույլ են տալիս ոչ միայն արձանագրել ակտիվության մակարդակները, այլ նաև **քարտեզագրել ռիսկային գոտիները**, որտեղ.

- երիտասարդների մասնակցությունը ցածր է,
- վստահության մակարդակը նվազ է,
- տեղեկատվական բացերը մեծ են:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ Արագածոտնի մարզում երիտասարդների քաղաքացիական և էկոլոգիական մասնակցությունը գտնվում է **անցումային փուլում**. առկա է հետաքրքրվածություն և պատրաստակամություն,

սակայն միաժամանակ նկատվում են վստահության, իրազեկվածության և մասնակցության որակի լուրջ խնդիրներ:

Այս իրավիճակը պահանջում է ոչ միայն ակտիվության խթանում, այլ **մասնակցության որակի, ազդեցության և վստահության վերականգնում**:

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԿ-ՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Պետական և համայնքային կառույցների հետ համագործակցության արդյունքում նույնականացվել է Արագածոտնի մարզում գրանցված **ավելի քան 130 քաղաքացիական հասարակական կազմակերպություն**, ինչը վկայում է քաղաքացիական դաշտի քանակական լայն ներկայության մասին: Ցանկը ներառում է տարբեր տարիներին գրանցված կազմակերպություններ՝ տարբեր ոլորտային ուղղվածությամբ և գործունեության ընդգրկմամբ:

Հասարակական կազմակերպությունների գործունեության և հարցման արդյունքների համադրումը թույլ է տալիս բացահայտել կարևոր օրինաչափություն: Հարցման ընթացքում երիտասարդների մեծ մասը չի կարողացել նշել գործող երիտասարդական կամ բնապահպանական կազմակերպություններ իրենց համայնքում կամ մարզում:

Հասարակական կազմակերպությունների ուսումնասիրությունից հնարավոր է եզրակացնել, որ ակնհայտ բնապահպանական ուղղվածություն 131 ՀԿ-ից ունի 6,5 տոկոսը միայն: Այնուամենայնիվ, ՀԿ-ների կանոնադրությամբ ոչ բնապահպանական ուղղվածություն ունեցող ՀԿ-ները ևս կարող են իրենց ծրագրերում ունենալ էկո բաղադրիչ:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդները որպես մասնակցության խթան կարևորում են.

- իրենց ձայնի իրական ազդեցությունը,
- մասնակցության հստակ և հասկանալի մեխանիզմները,
- վստահելի կառույցների առկայությունը:

Սակայն ՀԿ-ների ներկա վիճակը ցույց է տալիս, որ դրանք դեռևս լիարժեք չեն ընկալվում որպես այդպիսի կառույցներ: Սա պայմանավորված է ոչ միայն ՀԿ-ների պասիվությամբ, այլ նաև նրանց գործունեության սահմանափակ հանրայնացմամբ և երիտասարդների հետ աշխատանքի ոչ համակարգված բնույթով:

Այլ կերպ ասած, Արագածոտնի մարզում առկա է իրավիճակ, որտեղ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները քանակապես գոյություն ունեն, սակայն դրանց գործունեությունը միշտ չէ, որ հասնում է երիտասարդներին կամ ընկալվում է որպես համայնքային կյանքի ակտիվ և ազդեցիկ մաս: Սա նպաստում է այն ընկալմանը, որ քաղաքացիական մասնակցությունը որոշ դեպքերում կրում է ձևական բնույթ և չունի իրական ազդեցություն համայնքային գործընթացների վրա, ինչն էլ արտացոլվել է հարցման պատասխաններում:

Արագածոտնի մարզում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դաշտը գտնվում է զարգացման երկակի փուլում. մի կողմից առկա է կազմակերպությունների քանակական աճ, մյուս կողմից՝ սահմանափակ ակտիվություն և ցածր ճանաչելիություն երիտասարդների շրջանում:

Հարցման արդյունքների և տվյալների համադրումը ցույց է տալիս, որ երիտասարդների քաղաքացիական մասնակցության խթանման համար անհրաժեշտ է ոչ միայն նոր կազմակերպությունների ստեղծում, այլ գործող ՀԿ-ների ակտիվացման, տեսանելիության բարձրացման և երիտասարդների հետ համակարգված աշխատանքի զարգացում:

Այս համատեքստում հարցման արդյունքները և հասարակական կազմակերպությունների առկայությունը միասին բացահայտում են քաղաքացիական և էկոլոգիական մասնակցության հիմնական խնդիրը Արագածոտնի մարզում. **խնդիրը ոչ թե կազմակերպությունների կամ հետաքրքրված երիտասարդների բացակայությունն է, այլ գործող**

դերակատարների միջև կապի, տեսանելիության և համակարգված աշխատանքի պակասը:

Ստացված վերլուծությունը հիմնավորում է նոր մոտեցումների անհրաժեշտությունը որպես կամուրջ երիտասարդների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և համայնքային կառույցների միջև, ինչպես նաև ընդգծում է տվյալահեն քարտեզագրման կարևորությունը՝ քաղաքացիական և էկոլոգիականլոգիական նախաձեռնությունների իրական պատկերը տեսանելի դարձնելու համար:



Ինտերակտիվ քարտեզի շրջանակում կարևոր է ընդգծել.

- համայնքներում գործող ակտիվ ՀԿ-ները,
- պասիվ կամ քիչ տեսանելի կազմակերպությունների կուտակումը,
- այն տարածքները, որտեղ երիտասարդների ներգրավվածությունը ցածր է՝ չնայած ՀԿ-ների ֆորմալ առկայությանը:

Այս մոտեցումը թույլ կտա քարտեզը դարձնել ոչ միայն տեղեկատվական, այլ նաև վերլուծական գործիք ապագա ծրագրերի պլանավորման համար:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ

Սույն հետազոտության շրջանակում հավաքագրված տվյալները նպատակ ունեն ծառայելու ոչ միայն իրավիճակի նկարագրմանը, այլ նաև կիրառելի գործիք դառնալու ապագա որոշումների կայացման և միջամտությունների թիրախավորման համար: Հարցման արդյունքները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների վերաբերյալ տվյալները ձևավորում են այնպիսի տվյալային հիմք, որը կարող է արդյունավետորեն ինտեգրվել քաղաքացիական և էկոլոգիականլոգիական ինտերակտիվ քարտեզի մեջ:

Հարցման տվյալները թույլ են տալիս քարտեզագրել երիտասարդների քաղաքացիական և էկոլոգիական մասնակցության մակարդակները համայնքային կտրվածքով՝ առանձնացնելով ինչպես բարձր ակտիվություն ցուցաբերող խմբերը, այնպես էլ այն համայնքներն ու խմբերը, որտեղ մասնակցությունը սահմանափակ է կամ էպիզոդիկ բնույթ ունի: Միաժամանակ, հնարավոր է տեսանելի դարձնել մասնակցությանը խոչընդոտող հիմնական գործոնների տարածական բաշխումը՝ տեղեկատվական բացեր, վստահության պակաս, մասնակցության մեխանիզմների անհասկանալիություն:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների վերաբերյալ տվյալների համադրումը հարցման արդյունքների հետ հնարավորություն է տալիս քարտեզագրել ոչ միայն կազմակերպությունների ֆորմալ առկայությունը, այլ նաև դրանց ճանաչելիության և ընկալվող ազդեցության մակարդակը երիտասարդների շրջանում: Այս համադրումը թույլ է տալիս բացահայտել այն տարածքները, որտեղ առկա են քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, սակայն

երիտասարդների ներգրավվածությունը և վստահությունը դրանց նկատմամբ ցածր է:

Այս մոտեցումը քարտեզագրումը դարձնում է ոչ միայն տեղեկատվական, այլ նաև վերլուծական և ռազմավարական գործիք՝ հնարավորություն տալով տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական կազմակերպություններին և ծրագրերի իրականացնողներին տվյալների վրա հիմնված որոշումներ կայացնել, ավելի նպատակային պլանավորել միջամտությունները և գնահատել քաղաքացիական մասնակցության զարգացման շարժը:

Վերջիվերջո, տվյալների քարտեզագրումը նպաստում է քաղաքացիական մասնակցության և երիտասարդների ներգրավման գործընթացների թափանցիկացմանը, ինչպես նաև վստահության կառուցմանը՝ ապահովելով, որ մասնակցությունը դառնա ոչ թե ձևական, այլ հասկանալի, տեսանելի և ազդեցիկ գործընթաց:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունը ցույց է տալիս, որ Արագածոտնի մարզում երիտասարդների քաղաքացիական և էկոլոգիական մասնակցությունը գտնվում է անցումային փուլում. առկա է հետաքրքրվածություն և մասնակցության որոշակի փորձ, սակայն այդ մասնակցությունը հիմնականում կրում է էպիզոդիկ և ոչ համակարգված բնույթ:

Հարցման արդյունքները բացահայտում են, որ երիտասարդների քաղաքացիական և էկոլոգիական ակտիվության սահմանափակումը հիմնականում պայմանավորված է ոչ թե հետաքրքրվածության բացակայությամբ, այլ տեղեկատվական, կազմակերպչական և ինստիտուցիոնալ խոչընդոտներով: Տեղեկատվության պակասը, մասնակցության գործընթացների անհասկանալիությունը, ինչպես նաև երիտասարդների ձայնի իրական ազդեցության նկատմամբ վստահության պակասը ձևավորում են մասնակցության նկատմամբ զգուշավոր կամ ձևական վերաբերմունք:

Առկա տվյալների և հարցման արդյունքների համադրումը ցույց է տալիս նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դաշտի երկակի բնույթը Արագածոտնի մարզում: Չնայած մարզում գրանցված է ավելի քան 130 հասարակական կազմակերպություն, դրանց զգալի մասը երիտասարդների կողմից չի ընկալվում որպես համայնքային կյանքի ակտիվ և ազդեցիկ դերակատար: Սա վկայում է տեսանելիության, հաղորդակցության և համակարգված աշխատանքի բացերի մասին, որոնք սահմանափակում են ՀԿ-ների կարողությունը՝ հանդես գալու որպես երիտասարդների քաղաքացիական մասնակցության վստահելի միջնորդներ:

Ստացված տվյալները ցույց են տալիս, որ քաղաքացիական և էկոլոգիական մասնակցության զարգացման հիմնական խնդիրը Արագածոտնի մարզում քանակական առկայության և իրական ազդեցության միջև առկա բացն է: Առկա են և՛ մասնակցության կառուցակարգեր, և՛ կազմակերպություններ, և՛ հետաքրքրված երիտասարդներ, սակայն այդ տարրերը հաճախ չեն միավորվում մեկ ամբողջական համակարգի մեջ:

Այս համատեքստում հետազոտության արդյունքները հաստատում են տվյալահեն քարտեզագրման կարևորությունը՝ որպես գործիք քաղաքացիական և երիտասարդական մասնակցության իրական պատկերը տեսանելի դարձնելու, ռիսկային և բարձր ներուժ ունեցող գոտիները նույնականացնելու, ինչպես նաև ապագա միջամտություններն ավելի նպատակային պլանավորելու համար:

Ամփոփելով՝ Արագածոտնի մարզում երիտասարդների քաղաքացիական և էկոլոգիական մասնակցության խթանումը պահանջում է ոչ միայն ակտիվության ավելացում, այլ մասնակցության որակի, ազդեցության և վստահության համակարգված բարելավում: Սույն հետազոտությունը կարող է ծառայել որպես բազային հարթակ՝ այդ գործընթացները տվյալների վրա հիմնված և երկարաժամկետ կերպով զարգացնելու համար:

«ՄԻԱՎՈՐՈՂ ԿԱՄՈՒՐՋ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԿ
0226, ՄԱՇՏՈՑԻ 97, ՕՇԱԿԱՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԷԼ. ՓՈՍՏ: INFO@UBNGO.AM
ՀԵՌԱԽՈՍ: +37477458858

ՄԻԱՎՈՐՈՂ ԿԱՄՈՒՐՋ
սոցիալական հասարակական կազմակերպություն